ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/0685/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

3 փետրվարի 2025թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Աշոտ Սահակյան Հրաչյայի» Ա/Ձ-ն ընդդեմ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «ՍՄԱՐԹ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերություն՝ թիվ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՄՀՀ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 13.01.2024թ. որոշումը՝ Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու, 13.01.2024թ. որոշումը՝ «ՍՄԱՐԹ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասով, անվավեր ճանաչելու, և Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին գնահատող հանձնաժողովի 13.01.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Աշոտ Սահակյան Հրաչյայի» Ա/Ձ-ի ներկայացուցիչը 2025թ. հունվարի 24-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարան ընդդեմ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի, երրորդ անձ՝ «ՍՄԱՐԹ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊընկերություն՝ թիվ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՄՀՀ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 13.01.2024թ. որոշումը՝ Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու, 13.01.2024թ. որոշումը՝ «ՍՄԱՐԹ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասով, անվավեր ճանաչելու, և Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին գնահատող հանձնաժողովի 13.01.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:
Դատարանի 2025թ. հունվարի 29-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. հունվարի 29-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հունվարի 30-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2025թ. հունվարի 24-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Աշոտ Սահակյան Հրաչյայի» Ա/Ձ-ն ընդդեմ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «ՍՄԱՐԹ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերություն՝ թիվ ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՄՀՀ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 13.01.2024թ. որոշումը՝ Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին ընտրված մասնակից ճանաչելու, 13.01.2024թ. որոշումը՝ «ՍՄԱՐԹ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասով, անվավեր ճանաչելու, և Սահակյան Աշոտ Հրաչյայի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին գնահատող հանձնաժողովի 13.01.2024թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. հունվարի 24-ին:
Թիվ ԵԴ2/0685/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. մարտի 7-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.02.03 17:55:35 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am